ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, Էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Հայաստանի լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմնի փորձագիտական կարծիքը «Արմենիա» հեռուստաընկերության եթերում թողարկված մի շարք լրատվական նյութերի վերաբերալ «Հայկական կարմիր խաչ» ընկերության նախկին աշխատակից Նունե Գրիգորյանի բողոքի կապակցությամբ։

Ա. ՓԱՍՏԵՐ

- 2024թ. մարտի 21-ին Հայաստանի լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմին (ԴՄ) է դիմել «Հայկական կարմիր խաչ» ընկերության (ՀԿԽԸ) լրատվական եւ լուսաբանման բաժնի նախկին ղեկավար Նունե Գրիգորյանը՝ տեղեկացնելով, որ «Արմենիա» ՀԸ «Ժամը» լրատվական հաղորդման եթերում 2024 թ. փետրվարի 14-ից մարտի 19-ն ընկած ժամանակահատվածում թողարկված մի շարք ռեպորտաժներում ՀԿԽԸ նախագահության շուրջ վերջին շրջանում առկա գործընթացները լուսաբանվել են միակողմանիորեն։ Ըստ դիմումատուի՝ նշված նյութերը պատրաստելիս հեղինակը չի դիմել եւ չի ներկայացրել երկրորդ կողմի կարծիքը, ուղեկցող տեքստում ներկայացրել է բացառապես ելույթ ունեցող կողմի տեսակետները, որոնք պարունակում են տեղեկատվության մանիպուլյացիաներ, սուտ տեղեկություններ, բանախոսների կողմից արվող վիրավորական արտահայտություններ։ Դիմումատուն ենթադրում է, որ այդ կողմնակալ մոտեցումը պայմանավորված է «Արմենիա» ՀԸ սեփականատիրոջ եւ ՀԿԽԸ նախկին նախագահ Մխիթար Մնացականյանի ազգակցական կապով։
- Քննության առնելով դիմումը՝ Դիտորդ մարմինն ուսումնասիրել է բողոքում մեջբերված լրատվական նյութերը

(*«Հայկական Կարմիր խաչի անունն ու համարումը վտանգված է», ««Հայկական Կարմիր խաչ» ընկերության օրինական միակ նախագահը Մխիթար Մնացականյանն է», ««Հայկական Կարմիր խաչ» ընկերության շուրջ ծավալվող կրքերը չեն հանդարտվում», ««Հայկական Կարմիր խաչ»-ը հանցագործության մասին ավելի քան 10 հաղորդում է ներկայացրել ոստիկանություն», «Փաստաբան. «Հայաստանի Կարմիր խաչի ընկերության» նախագահությունը նոր հայտարարությամբ է հանդես եկել», «Փաստաբան. Պետռեգիստրը հայտարարել է՝ ՀԿԽԸ անվան տակ անցկացված արտահերթ համագումարը իրավազոր չէ»:*
Այնուհետեւ ԴՄ-ն դիմել է կողմերին՝ պարզաբանումների համար: Դիմումատուն նշել է, որ հրաժարվել է խնդրի լուծման համար դիմել «Արմենիայի» էթիկայի օմբուդսմանին, քանի որ կասկածում է նրա անաչառությանը վերը նշված՝ հեռուստաընկերության տնօրինության եւ ՀԿԽԸ փաստացի ղեկավարության հետ ազգակցական կապերի պատճառով:

- Ապրիլի 2-ին Դիտորդ մարմնի համակարգողը դիմել է «Արմենիա» հեռուստաընկերությանը, տեղեկացրել է բողոքի մասին եւ փորձել է կապ հաստատել ՀԸ օմբուդսմանի հետ՝ բողոքի մասին նրա տեսակետը ստանալու նպատակով: «Արմենիա» ՀԸ-ը ավելի քան երկու շաբաթվա ընթացքում չի ապահովել օմբուդսմանի հետ կապը՝ պատճառաբանելով, որ նա երկրում չէ: Ապրիլի 22-ին հեռուստաընկերությունից տեղեկացրել են, որ օմբուդսմանն ազատվել է աշխատանքից:

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հոդված 4. 1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք

Հոդված 46.3. [Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի] հայտին կցվում են՝

5) էթիկայի կանոնագիրը, որը լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանա լիցենզիայի պայման.

6) Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները, որոնք լիցենզիա ստանալու դեպքում կհանդիսանան լիցենզիայի պայման.

3. [Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր]

Խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են

1.1. Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

1.4. Փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը հստակ սահմանազատել կարծիքներից, վերլուծություններից եւ մեկնաբանություններից,

3.1. Լրագրողական նյութերը հստակ սահմանազատել գովազդից. յուրաքանչյուր հրապարակում, որի համար վճարվել է, պետք է այդ մասին նշում ունենա: Նույն կերպ մակնշել նաեւ հանրային կապերի (PR) ծառայություններից եւ կազմակերպություններից ստացված նյութերը:

3.3. Դիմակայել իրադարձությունների լուսաբանման վրա ազդելու նպատակով գովազդատուների, հովանավորների, ԶԼՄ սեփականատերերի գործադրած ճնշումներին: Այն դեպքում, երբ նման ճնշումը սպառնում է վերածվել հանրային մարտահրավերի, հրապարակային դարձնել իրավիճակը՝ դիմելով լրագրողների եւ հանրության աջակցությանը:

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, եւ պատասխանի հնարավորություն ընձեռել բոլոր նրանց, որոնց հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը, ուսումնասիրելով «Արմենիա» հեռուստաընկերության դեմ Նունե Գրիգորյանի ներկայացրած բողոքում մեջբերված նյութերը, **արձանագրում է, որ**

- «Արմենիա» հեռուստաընկերությունը խախտել է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկայի

կանոնագրի 1.1, 1.4 հոդվածները՝ իրավական վեճի մասին պատմող խնդրո առարկա լրատվական նյութերում ներկայացնելով միայն մեկ կողմի տեսակետը եւ գնահատականները՝ առանց մյուս կողմի կամ երրորդ՝ անաչառ կողմերի տեսակետն ու գնահատականը ներկայացնելու։

- Դիտորդ մարմնի գնահատմամբ, հաշվի առնելով փաստը, որ ՀԿԽԸ ներկայիս ղեկավարության եւ «Արմենիա» ՀԸ սեփականատիրոջ միջեւ ազգակցական կապ կա, զգայուն լրատվական նյութեր պատրաստելիս առավելեւս պետք էր լինել անկողմնակալ եւ հնարավորինս ներկայացնել բոլոր կողմերի տեսակետները, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հրաժարվել թեման լուսաբանելուց։

- Սույն բողոքի մասին ծանուցված լինելով հանդերձ, «Արմենիա» հեռուստաընկերությունը պատրաստակամություն չի հայտնել հանդիպելու այն անձանց, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում խնդրո առարկա հրապարակումներով։ Հեռուստաընկերությունը պատասխանի հնարավորություն չի տվել նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել այդ հրապարակումներում, ինչը խախտում է որակվում՝ ըստ Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 6.2 հոդվածի։ Թեպետ «Արմենիա» հեռուտաընկերությունը չի միացել ինքնակարգավորման նախաձեռնությանը, չի ստորագրել Կանոնագիրը եւ ընտրել է ինքնակարգավորման սեփական եղանակը, Դիտորդ մարմինը համարում է, որ հեռուստաընկերությունը, ելնելով իր ներքին ընթացակարգերից, պարտավոր էր ընթացք տալ բողոքին։

- Ի կատարումն «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 46.3 հոդվածի պահանջի՝ «Արմենիա» հեռուստաընկերությունը լրագրողական էթիկայի ապահովման ինքնակարգավորման միջոց է ընտրել օմբուդսմանի ինստիտուտը։ Սույն գործի շրջանակներում հեռուստաընկերության օմբուդսմանը, սակայն, փաստորեն չի արձագանքել ԴՄ հարցմանը, իսկ հարցումից շուրջ երեք շաբաթ անց պարզվել է, որ տվյալ անձն այլեւս «Արմենիայի» օմբուդսմանը չէ։ Այս առիթով Դիտորդ մարմինն արձանագրում է, որ օմբուդսմանի՝ արձակուրդում գտնվելու կամ աշխատանքից ազատվելու դեպքում, մինչեւ նոր օմբուդսմանի նշանակումն ու իր

պարտականությունների կատարմանն անցնելը, անհստակ են մնում էթիկական խնդիրներին արձագանքելու կարգավորումները։

Ընդունվել է 2024 թ. մայիսի 13 -ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԳԱԼԱ» ՀԸ գործադիր տնօրեն
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 82-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների՝ 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: